Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 6-ի N 846 - Ն որոշման

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՐԿԱԴԻՐ ՄՈՐԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են կենդանիների ոչնչացման կամ հարկադիր մորթի իրականացման պայմաններն ու դեպքերը:

2. Կենդանիների և մարդկանց առողջությանն սպառնացող վտանգ հանդիսացող կենդանական ծագման հումքի և մթերքի հետագա որևէ օգտագործումը կամ սպառումը բացառելու նպատակով իրականացվում է կենդանիների կամ նրանց դիակների ոչնչացում՝ այրման կամ բարձր ջերմաստիճանի և ճնշման պայմաններում հալեցման միջոցով, ինչպես նաև թաղումը, ստորգետնյա պահեստավորումը կամ կուտակումը, վերգետնյա այրումը (վառում) վառելանյութի միջոցով բացօթյա պայմաններում, անմիջական այրումը հատուկ սարքավորումների պայմաններում:

3. Որոշակի հիվանդությունների դեմ պայքարի ընթացքում վարակված կամ վարակման անմիջական սպառնալիքի ենթակա գյուղատնտեսական կենդանիների նկատմամբ իրականացվում է սանիտարական սպանդ՝ պայմանական պիտանի կենդանական ծագման հումքի և մթերքի ստացմամբ, որոնք կարող են օգտագործվել վնասազերծումն ապահովող վերամշակումից հետո, որը երաշխավորում է դրանց անվտանգությունը:

4. Կենդանիների հարկադիր մորթն իրականացվում է սպանդանոցներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-Ն որոշման համաձայն:

5. Կենդանիները ոչնչացվում կամ հարկադիր մորթի են ենթարկվում սույն կարգով, ըստ հարուցչի՝ գիտականորեն հիմնավորված, ինչպես նաև ԿԱՀԿ–ի պահանջներին համապատասխան, եթե՝

1) լաբորատոր փորձաքննության արդյունքում հիվանդությունն ախտորոշվել է.

2) կենդանիների մոտ դրսևորվում է նոր վարակիչ հիվանդություն (էմերջենտ), որը կարող է առաջանալ՝ արդեն իսկ հայտնի հարուցչի գենային ձևափոխությունից կամ աշխարհագրական նոր տարածքի ներթափանցմամբ կամ անհայտ հարուցչով վարակվելիս:

6. Ախտաբանաանատոմիական հետազոտության համար նմուշառումն իրականացվում է ելնելով կասկածվող վարակիչ հիվանդության տեսակից:

7. Հիվանդության ախտորոշումը հաստատելու կամ հերքելու նպատակով ախտաբանական նյութի նմուշները տեսչական մարմինը ներկայացնում է անասնաբուժական լաբորատորիա, անհրաժեշտության դեպքում՝ ռեֆերենս լաբորատորիա:

8. Տեսչական մարմնի վերահսկողությամբ կազմակերպվում է դիակների, կենդանիների ոչնչացման և ախտահանության աշխատանքներ, որոնք իրականացվում են տնտեսավարողի կողմից:

9. Կենդանիների հիվանդացության, անկման, ոչնչացման կամ հարկադիր մորթի դեպքերի և իրականացված միջոցառումների վերաբերյալ տեսչական մարմնի կողմից կազմվում է ակտ, որը պետք է ներառի

1) ակտի կազմման տարին, ամիսը, ամսաթիվը.

2) սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, անձնագրի պատճենը, հեռախոսահամարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը և կոնտակտային տվյալները.

3) անկած և վտանգված կենդանիների գլխաքանակի, նույնականացման համարի (առկայության դեպքում), կենդանատեսակի, սեռահասակային խմբի վերաբերյալ տվյալներ.

4) հիվանդության կլինիկական նշանները.

5) նմուշառման օրը, ամիսը, ամսաթիվը, լաբորատոր փորձաքննության տվյալները՝ առկայության դեպքում.

6) ոչնչացման և դիակի (դիակների) թաղման վայրը, իրականացված ախտահանիչ միջոցառումները:

10. Ակտը կազմվում է 3 օրինակից և ստորագրվում է կենդանու սեփական-նատիրոջ, տեսչական մարմնի աշխատակցի, համաճարակաբանի, համայնքի կամ բնակավայրի ղեկավարի կամ ավագանու կողմից:

11. Սույն որոշմամբ սահմանված անասնահամաճարակների բռնկմանը և (կամ) տարածմանը պատճառ հանդիսացող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ